

եղած ազգային հողերը մահլիւլ (անտէր) չընկատուեն և այնտեղ բանտեր չըշինուեն:

Լրագրերից տեղեկանում ենք, որ երիտասարդ վարդապետների եպիսկոպոսացման և առաջնորդ կարգուելութանդիրը բաւական դէմ խորհրդածութեան նիւթ է դարձել Կ. Պօլսում և զաւառներում:

Երուսաղէմայ գործեր, — Երուսաղէմի Տեղապահը հեռագրել է պատրիարքարան, որ մինչև մարտի 22-ը ուխտաւորների թիւը հասած է եղել 1220-ի, յոյս կայ, որ մինչև Ձատիկ 1500-ի հասնի, մինչ ուրիշ տարիներ 900-ից աւելի չէ եղել: Տ. Գրիգորիս արքեպիսկոպոսն էլ հասել է Երուսաղէմ: Երուսաղէմի կուսակալ է նշանակուել Ազմի Պէյը, որին այցելել է Երուսաղէմի փոխանորդ Տ. Սմբատ վարդապետը շնորհաւորելու տեղապահի և միաբանութեան կողմից: Կուսակալը ցանկութիւն է յայտնել, Պօլսից մեկնելուց առաջ նորից տեսնել փոխանորդին:

Կեսարիայի առաջնորդ Տրդատ եպիսկոպոսը, որ Կ. Պօլիս էր կոչուած, վարչութեան առաջարկին համակերպելով, պէտք է գնայ Երուսաղէմ գործակցելու տեղապահին վանքի բարեկարգութեան և տնտեսութեան կանոնաւորման համար: Տրդատ սրբազանը մարտի վերջերին Ձմիւռնիա գնալով իւր զառամեալ մօրը տեսնելուց յետոյ անմիջապէս պէտք է մեկնի Երուսաղէմ:

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐ

Արմենիայի մէջ կարդում ենք, որ Գալկաթայի Հայոց ճեմարանի աշակերտների նախկին միութիւնը յունվարի 3-ին տուել է իւր տարեկան ճաշկերոյթը, որին նախագահել է Ժ. Գ. Գալստեան. ներկայ են եղել 70-ի չափ անձեր:

Ճառախօսներից մէկը ասել է.

Մեր ծրագիրն է կրթել մեր հայ երիտասարդները ազգութեան ընազգով, անոնց սորվեցունելով իրենց հայրերէլեզուն, կրօնքը, պատմութիւնն ու աւանդութիւնները,

իրենց տալով հանդերձ քաջ ծանօթութիւն մը անդլիական լեզուին ու բարբերին: Ուրիշ խօսքով՝ մեր աշակերտներին կը վարժեցնենք ու կը կրթենք, որպէսզի լինին բրիտանական հայտերութեան ընտիր հայ քաղաքացիներ...:

Հնդկաստանի հայերը մի ժամանակ, ժ՛՛՛՛՛ դարում և ժ՛՛՛-ի սկզբում հայ լուսաւորութեան և ամենալաւ ցանկութիւնների կարապետներն էին: Երանի թէ նրանց թոռները բարի նախանձ ունենան զարգացնել իրանց մէջ ազգութեան բնազդները և իրանց զաւակներին սովորեցնեն հայ լեզուն ու կրօնքը, պատմութիւնն ու աւանդութիւնները, որով միայն կարողեն հայ մնալ հեռաւոր օտարութեան մէջ:

ՀԱՅԳ Ի ՀՆԴԱՍՏԱՆ

Հնդկաստանի Հայաբնակ կարեւոր կեդրոնէն՝ Կալկաթայէն շահեկան տեղեկութիւններ հաղորդած են տեղւոյն Հայկական հաստատութիւններու և Հայ ժողովուրդին ազգային կրթական և անտեսական վիճակին նկատմամբ: Այս տեղեկութիւնները կը հրատարակենք իբրև հետաքրքրական:

Հայերն ունին, կըսէ թղթակիցը, Ս. Նազարէթ անուն Հայ եկեղեցի մը գմբեթաձև, և գլուխը կայ ժամացոյց մը: Եկեղեցին կրնայ պարունակել 1000ի չափ ժողովուրդ. 2000ի չափ Հայ բնակիչ ունի Կալկաթա մօտաւորապէս, 200 տունով: Քաղաքէն հինգ մղոն հեռաւորութեամբ ունի երկու հին և նոր Հայ գերեզմանատուն. ունի մէկ ճեմարան՝ Մարդասիրական անուն, Հայ տղացոց համար, 150 աշակերտով, որոնք կուսանին հայ և անգլիացի ուսուցիչներէ հայերէն և անգլիերէն: Նոր Զուղայէն կուգան երեք քահանաներ՝ երեք տարուան պայմանաժամով: Առաջնորդը կնստի Ամենամիտիկեան վանքին մէջ: Այժմ Առաջնորդն է Տ. Սահան Արքեպիսկ. Այլատեան: Կալկաթա ունի երկու հատ հայկական գլիւպ 1000ի չափ անդամներով, որոնք կուտան ձմեռնային շրջանի մէջ երեկոյթներ, պարահանդէսներ ներկայացումներ: Հայերէն կխօսին ընդհանրապէս Կալկաթայի մէջ Նոր Զուղայեցիք և Հին Կալկաթայիք, նոր սերունդը, թէ մանչ և թէ աղջիկ, միայն անգլիերէն գիտէ ու կը խօսի: Աւանդութիւնները կը պահուին, սակայն տեղւոյն Հայոց մէջ, և հայ քահանաները Ծնունդին և Զատիկին տունները կայցելեն և կօրհնեն, իսկ մեռելոցի տօնին կերթան գերեզմանատուն, օրհնելու համար: Ունին Հայ կառավարիչներ եկեղեցւոյ և դպրոցի համար,

ինչպէս նաեւ երեսփոխաններ և վերատեսուչներ: Կայ աղքատանոց մը, ուր կ'ընակին 70—100 աղքատ Հայեր խառն դասակարգէ: Ասոնց ծախքը Ս. Նազարէթ եկեղեցին կ'հոգայ և կ'վերադառնան եկեղեցւոյ ծանօթ իրենց հայրենիքը: Եկեղեցին ամէն տարի կ'բաժանէ աղքատներուն՝ իրենց տեղերը զրկելու համար 4—5000 ըուբի (մէկ ըուբին 1 շիլին 4 բէնս) ճանապարհածախս: Վաղեմի սովորութեան համեմատ, Տեառնդառաջի երեկոյն եկեղեցւոյ մէջ մոմեր կ'ուտան և 1 ըուբի կստանան աղքատաց համար:

Աղքար և Ընկ. առևտրական Տունն ունի 4—5000 թոնօնոց շոգենաւներ, որ կերթեկեն Սինկաբուր, Հոնկ—Քոնկ, Շանհայ, Եդքոհամա և ճաբոն: Ունին նաեւ գործատուն, ուր կշինեն պարկեր բրինձի, ցորենի և շաքարի. ունին ածուխի հանքեր, բայց բոլոր գործաւորներն օտարական են: Կան 10 ի չափ մանր վաճառատուներ, 30 հայ փաստաբաններ, 50 դոմիսիոնէր. 20 բժիշկներ, 200 ի չափ հասարակ արհեստաւոր, 10 ճարտարապետ, 50 ի չափ հայթայթիչներ, 1 փայտի վաճառական, 1 կօշկակար, 1 պանդոկապետ, 100 մերենադործ, 1 պատկերահան: Հինգի չափ ածուխի հանքեր կան: Տուններու վարձքերը շատ սուղ են, նոյնպէս ծառաներու, սակայն ուտելիքները շատ առատ և աժան են, հագուստները չափաւոր են, ոչ աժան են, և ոչ սուղ: Տուններն ունին ելեկտրական լոյս. շէնքերը հոյակապ և հաստատուն, բոլոր փողոցներուն մէջ կան ելեկտրական թրամվէյներ: Քաղաքն ունի 2 միլիոն ժողովուրդ, մեծամասնութեամբ Հնդիկ: Քաղաքն ունի համալսարաններ, գօլէթներ, գրատուններ և քաղաքային պարտէզներ:

Հնդկաստանի Հայ դաղթականութեան կեանքէն տեղեկութիւններ շատ քիչ անգամ կ'աղորդուին, բայց իբրեւ ծանօթութիւն ազգին կաւոր մէկ մասին, որ այդ հեռաւորութեան մէջ իր ազգային նկարագիրը պահած է և իր զաւակները կդաստիարակէ Հայու զգացումներով: Փափաքելի է, որ Կալիֆայի Հայութիւնը կամ Մարդասիրական ճեմարանն ունենայ իր կանոնաւոր պարբերական մէկ թերթը, որ Հնդկահայոց վերաբերեալ ամէն շարժում ժամանակին տեղեկացնէ:

Բիւզանդիոն

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՔ.

Ամերիկայի Հայոց երեսփոխանական ժողովի ատենադրութիւնից (տպած) տեղեկանում ենք, որ տարւոյս փե-